

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
(ՄԻԱԿ ԲԱԺՆԵՏԻՐՈՋ)

ՈՐՈՇՈՒՄ N 03 Ա

ք. Երևան

28 հունիսի 2012թ.

ՍՈՒՐԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ժ» ենթակետը, 68-րդ հոդվածի 6-րդ կետը,

Հաշվի առնելով «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) վերստուգող Սուրեն Մովսիսյանի դիմումը նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին՝

2012թվականի հունիսի 28-ին իր գտնվելու վայրում (ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6) Ընկերության 100% բաժնետոմսեր ունեցող միակ բաժնետեր Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանի,

Ո Ր Ո Շ Ե Ց ՝

1. Վաղաժամկետ դադարեցնել Ընկերության վերստուգող Սուրեն Մովսիսյանի լիազորությունները 2012 թվականի հունիսի 29-ից:

2. Ընկերության գործադիր տնօրենին՝ 2012 թվականի հունիսի 29-ից լուծել Սուրեն Մովսիսյանի հետ 2009թ. հունիսի 01-ի կնքված թիվ 05 պայմանագիրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ



Արթուր Զավադյան

Handwritten signature in blue ink at the bottom left of the page.

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
(ՄԻԱԿ ԲԱԺՆԵՏԻՐՈՋ)

ՈՐՈՇՈՒՄ N 04 Ա

ք. Երևան

28 հունիսի 2012թ.

ԴՎԱԿԻԹ ԲԱԲԱՍՅԱՆԻՆ «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՎՎԿ ՓԲԸ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ժ» ենթակետը, 68-րդ հոդվածի 6-րդ կետը, 2012 թվականի հունիսի 28-ին իր գտնվելու վայրում (ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6) «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ 100% բաժնետոմսեր ունեցող միակ բաժնետեր Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, իդեմս՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանի,

ՈՐՈՇԵՑ՝

1. Դավիթ Բաբասյանին (այսուհետ՝ Աշխատող) նշանակել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ՝ որպես վերստուգող:
2. Սահմանել որ՝
 - 2.1 Աշխատողի աշխատանքը սկսվում է 2012 թվականի հուլիսի 2-ից.
 - 2.2 Աշխատողի գործառույթները սահմանվում են համաձայն սույն հրամանի հավելվածը հանդիսացող «Աշխատատեղի նկարագրի»՝ կցվում է.
 - 2.3 Աշխատողի աշխատավարձը կազմում է ամսական՝ 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ.
 - 2.4 Աշխատանքային պայմանագիրը կնքվում է 3 տարի ժամկետով:
 - 2.5 Աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների առկայության դեպքում Աշխատողին տրվում են հավելումներ: Հավելումների, պարգևավճարների ու փոխհատուցումների չափերը և վճարման կարգը սահմանվում է գործատուի կողմից, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:
3. Ընկերության գործադիր տնօրենին՝ Աշխատողի հետ կնքել սույն որոշմանը համապատասխան աշխատանքային պայմանագիր:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Արթուր Զավադյան

